ՀՀ Արմավիրի մարզի Աղավնատուն
համայնքի ղեկավար Գ. Մաթևոսյանի
2019թ. տարեկան կատարած աշխատանքների

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մասնակցությամբ՝ ՀՀ Արմավիրի մարզպետարանի Գլխավոր քարտուղարի տեղակալ Արամ Հովհաննիսյանի, համայնքի ավագանու անդամների, համայնքապետարանի աշխատակազմի և <<Կրթություն և Մշակույթ>> միացյալ տնօրինության աշխատակիցների, համայնքի բնակիչների:

06-02-2020թ. ժամը 14:00

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնքի ղեկավարը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նրանից բխող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերով, «Տեղական ինքնակառավարման մասին», «Իրավական ակտերի մասին», ՀՀ օրենքներով, համայնքապետարանի աշխատակազմի, ավագանու և համայնքապետարանի ենթակայության հիմնարկների աշխատակիցների միջոցով 2019թ. ընթացքում իրականացրել է իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում՝ իր լիազորությունները:
Հիմնական նպատակը՝ համայնքի բնակչության կենսամակարդակի բարձրացումն է, որին հասնելու ճանապարհին սահմանվել են կարևորագույն սոցիալ-տնտեսական խնդիրները, որոնք էլ անհրաժեշտություն է եղել լուծելու 2019թ. ընթացքում: Այդ խնդիրների լուծման համար կարևորագույն պայման է հանդիսացել Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի և համայնքի ավագանու ամենօրյա հոգատար վերաբերմունքը և համայնքի խնդիրների լուծմանն աջակից լինելու պատրաստակամությունը, որի արդյունքում արձանագրվել է որոշակի հաջողություններ, որոնք ըստ բնագավառների ներկայացնում եմ Ձեզ:

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հետևողական աշխատանք է տարվել ոռոգման և խմելու ջրի մատակարարման բարելավմանը, ինչպես նաև կազմակերպվել է աշնանացան հացահատիկի բերքահավաքը :
Գյուղն ունի իր առանձնահատկությունները.
Հիմնականում զբաղվում են հողագործությամբ՝ այգեգործությամբ և պտղաբուծությամբ:
Համայնքում կան ոչ շատ քանակությամբ չմշակված հողատարածքներ, որի հիմնական պատճառներն են՝

1. Հողասեփականատերերի բացակայությունը համայնքից
2. Տարիքային պատճառները
3. Հողերի անբերրիությունը

Ուշադրության կենտրոնում է պահվում աճեցրած բերքի իրացման, գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների դեմ պայքարի աշխատանքները: Համայնքապետարանի ուժերով տարվա ընթացքում մշտապես կատարվել է մոլախոտերի դեմ պայքարի միջոցառումներ, ծախսվել է 450.0 հազ. դրամ
Պարբերաբար կատարվում է ներտնտեսային ոռոգման ցանցի մաքրման աշխատանքներ:
Անմիջական հսկողություն է իրականացվում անասնաբուժական ծառայության ոլորտում՝ ժամանակին կատարվում է բոլոր հակահամաճարակային միջոցառումները, կենդանիների հիվանդությունների կանխարգելման ուղությամբ:
Հետևողական և սիստեմատիկ հսկողություն է սահմանվում հանձնաժողովի կողմից առևտրի, հասարակական սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործող օբյեկտների գործունեության վրա: Ներկայումս համայնքում գործում է 16 առևտրի օբյեկտ:

## ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Ամենօրյա ուշադրության կենտրոնում է գտնվում և օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվում հողերի նպատակային օգտագործման, ինչպես նաև ընդերք օգտագործման գործունեություն իրականացնողների ուղությամբ:

Ամենօրյա աշխատանք է տարվում հողօգտագործողների հետ հողի հարկի, գույքահարկի գծով գոյացած ապառքների հավաքագրման ուղղությամբ: Սեփական եկամուտների պլանը հաջողվեց կատարվել 116,7%-ով, նախատեսված 23690.0 հազար դրամի դիմաց հավաքագրվեց 27642,2 հազար դրամ, հողի հարկի տարեկան պլանը կատարվել է 114,8 %-ով , գույքահարկը 133,5 %-ով, տեղական տուրքերը 104,9%-ով, ոչ հարկային եկամուտները 78,2 %-ով:

## ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Կառավարության սահմանած կարգով վերահսկողություն է իրականացվում համայնքի քաղաքաշինական գործունեության նկատմամբ:
Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվում է հողամասերի չափագրման և սահմանների ճշգրտման աշխատանքներ, տրվում են ճշտված իրավիճակային հատակագծեր:
Սիստեմատիկաբար կատարվում է խմելու ջրի ջրագծերի վթարների հայտնաբերման և վերացման աշխատանքներ:
Սահմանվում է հսկողություն խմելու ջրի որակի, ինչպես նաև վարակազերծման ուղղությամբ:
Սիստեմատիկաբար, շաբաթը 2 օր կատարվում է աղբահանություն, համայնքի բյուջեի սեփական միջոցների հաշվին, 2019թ. ընթացքում կատարվել է 1087,0 հազար դրամ ծախս:
Ծախսերը կրճատելու համար և սանիտարական մաքրության մակարդակը բարձր պահելու նպատակով ձեռք է բերված մեկ ինքնաթափ բեռնատար ավտոմեքենան գործում է անխափան: Այն օգտագործվում է նաև համայնքի բնակչության կարիքները հոգալու համար:

## ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ՍՊՈՐՏԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքում գործում է 1 միջանակարգ դպրոց:
Աշակերտների թիվը 316:
Աշխատողների թիվը՝ 42-ը, որից՝ ուսուցիչներ և վարչական աշխատողներ՝ 31:
Համայնքապետարանի ուշադրության կենտրոնում է դպրոցը:
Կրթության որակը գտնվում է բարձր մակարդակի վրա:
Նախադպրոցական խմբի գործունեության կազմակերպման համար համայնքի բյուջեից տարեկան 3430,0 հազ դրամ դրամաշնորհ է նախատեսվել:
Համայնքապետարանի նախաձեռնությամբ 2019թ. ընթացքում կազմակերպվել է տարբեր միջոցառումներ: Ծախսվել է 1390,0 հազար դրամ գումար:
Մշակույթի տանը տեղավորված է նաև գրադարանը, որը վերանորոգված և կահավորված է, ունի 1145 կտոր գրականություն: Գրադարանը մշակույթի հետ համատեղ կազմակերպել է տարբեր բնույթի միջոցառումներ, գրական ցերեկույթներ:
Մեծ ուշադրություն է դարձվում թոշակառուներին և երիտասարդության հետ տարվող աշխատանքներին՝ նրանց հանգիստը պատշաճ կազմակերպելու նպատակով Մշակույթի տանը գործում է հանգստի խաղասենյակ, որտեղ կազմակերպվում են շախմատի, նարդու, սեղանի, խաղերի մրցումներ:
Համայնքում կազմակերպվել է տարբեր միջոցառումներ, մշտապես ծաղկեպսակներ է դրվել << Բոլոր ժամանակներում զոհված Աղավնատունցիների >> հուշարձան համալիրին, ծախսվել է 780,0հազ դրամ:
Ուշադրության կենտրոնում է գտնվում սպորտի զարգացումը, գործում է կարատեի և մարտական առանց կանոնների խմբակները:
Համայնքապետի ամենօրյա ուշադրության կենտրոնում է նաև առողջապահության ոլորտը:
Աջակցություն է ցուցաբերվում համայնքի սանիտարահիգիենիկ վիճակի բարելավմանը, հակահամաճարակային միջոցառումների իրականացմանը:

Համայնքի բնակչության բուժ. սպասարկումը գտնվում է բարձր մակարդակի վրա:
Համայնքում գործում է «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողով, որի հիմնական խնդիրը անգործունակ կամ սահմանափակ գործունակ քաղաքացիների, անչափահասների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումն է, ընտանիքում ապրելու և դաստիարակվելու երեխայի իրավունքի ապահովումը:

Ուշադրության կենտրոնում է գտնվում զոհված ազատամարտիկների և սոցիալապես անապահովների ընտանիքները, որոնց մշտապես ցուցաբերվում է դրամական օգնություն: 2019թ. ընթացքում համայնքի շուրջ 136 սոցիալապես անապահով ընտանիքների, նորածին երեխաների մայրերի և մահացածների ընտանիքների տրվել է դրամական օգնություն 3845,0հազ. դրամ:

Համայնքում հաշվառված են ընդամենը՝ 370 թոշակառուներ, այդ թվում 245 ծերության և աշխատանքային , 2-ը՝ կերակրողը կորցնողի, 123-ը ՝ հաշմանդամության: Նպաստառու ընտանիքների թիվը կազմում է 86 : Թոշակները և նպաստները տրվում են ժամանակին:

Համայնքում 100% հասանելիություն ունի և գործում է բջջային ՄՏՍ-Հայաստան, Յուրոմ և <<Վեռն Արմենիա>> օպերատորները:

Համայնքում բարձր է պատասխանատվությունը զորակոչի նկատմամբ: Զորակոչից խուսափողներ չկան, 2019թ. զորակոչվել է 24 զորակոչիկ:

2019 թվականի ընթացքում համայնքում կատարվել է զգալի աշխատանքներ՝ մասնավորապես.

<<Մաքուր Հայաստան>> ծրագրի շրջանակներում երեք անգամ կատարվել է համայնքի աղբավայրի մաքրման հողալցման աշխատանքներ, այդ նպատակով կատարվել է 300,0 հազար դրամ ծախս, մաքրվել է համայնքի դպրոցի, բուժ. ամբուլատորիայի, համայնքապետարանի, մշակույթի տան ինչպես նաև պատմամշակութային հուշարձանների տարածքները և շրջակայքը:

Կատարվել է համայնքի դաշտամիջյան ճանապարհների փոսալցումներ և հարթեցումներ, որի վրա ծախսվել է 4960,2 հազար դրամ: Ձեռք է բերվել մետաղական խողովակներ, դաշտամիջյան ճանապարհների և համայնքի փողոցների խաչմերուկներով անցնող առուներում տեղադրելու համար 508,2 հազար դրամ արժեքով:

Սուբվենցիոն ծրագրով կատարվել է 750գծ.մ. ասֆալտապատման աշխատանքներ, ընդամենը 13960.0 հազար դրամ արժեքով /համայնք՝ 7678.0հազ.դր., պետ. բյուջեից 6282.0 հազ. դր/

Համայնքի տնտեսությունների թիվը ՝ 896, բնակչության թիվը 3399 մարդ, գյուղատնտեսության մեջ զբաղվում են՝ 1510 մարդ:

2019թվականի ընթացքում համայնքում ծնվել է 45 երեխա:

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2019թ. ընթացքում տարեկան կտրվածքով հավաքագրվել է եկամուտներ՝

հազար դրամ

| N | անվանումը | պլան տարեկան | Փաստացի տարեկան | կատարողական % |
|---|---|---|---|---|
| 1 | հողի հարկ | 9500.0 | 10902.3 | 114.8 |
| 2 | գույքահարկ | 10000.0 | 13346.6 | 133.5 |
| 3 | տեղական տուրքեր | 440.0 | 461.7 | 104.9 |
| 4 | տեղական վճար | 1350.0 | 933.7 | 69.2 |
| 5 | ոչ հարկային եկամուտներ | 2400.0 | 1798.7 | 76.9 |
| 6 | պետ. բյուջեից տրամադրվող դոտացիա | 61532.4 | 61532.4 | 100.0 |
| 7 | հողի օտարումից մուտքեր | - | 2179.3 | - |
| 8 | Պետ Բյուջեից սուբվենցիա | 6282.0 | 6282.0 | 100.0 |
| 9 | այլ որ հարկային եկամուտներ | - | 199.2 | - |
| 10 | ընդամենը վարչական բյուջե | 91504.4 | 97635.9 | 106.7 |
| 11 | տարեսկզբի ազատ մնացորդ | 17347.4 | 17706.5 | 102.1 |
| | Ընդամենը | 108851.8 | 115342.4 | 105.9 |

2019թ. ընթացքում տարեկան կտրվածքով կատարվել է ծախսեր հետևյալ ուղղություններով՝

հազար դրամ

| N | ծախսերի անվանումը | պլան տարեկան | փաստացի տարեկան | կատարողական % |
|---|---|---|---|---|
| 1 | տեղական ինքնակառավարում | 38915.0 | 38212.3 | 98.2 |
| 2 | Համայնք. այլ ծառ. | 12800.0 | 12431.2 | 97.1 |
| 3 | աղբահանություն | 1200.0 | 1087.0 | 90.6 |
| 4 | մշակույթ և ռադ. հեռ. հաղ. | 15100.0 | 14864.1 | 98.4 |
| 5 | կրթություն | 3430.0 | 3430.0 | 100.0 |
| 6 | Արտաքին լուսավորում | 3400.0 | 3246.8 | 95.5 |
| 7 | Սոց. օգնություն | 3875.0 | 3875.0 | 100.0 |
| 8 | Գյուղատնտեսություն | 1000.0 | 865.8 | 86.6 |
| 9 | ճանապարհների վերանորոգում | 5200.0 | 5005.8 | 96.3 |
| 10 | Քաղաքացիական պաշտպանություն | 300.0 | 0 | 0 |
| 11 | պահուստային ֆոնդ | 2.4 | 0 | 0 |
| 12 | ֆոնդային բյուջե | 23629.4 | 19885.8 | 84.2 |
| | Ընդամենը | 108851.8 | 102873.8 | 94.5 |

«Քաղաքացիների առաջարկությունների, դիմումների և բողոքների քննարկման կարգի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի պահանջի համաձայն, Աղավնատան համայնքապետարանում 2019թ. ընթացքում ստացվել է 94 դիմում:

Դիմումներում բարձրացվել են սոցիալական, ֆինանսական, հողային, շինարարության և այլ բնույթի հարցեր, որոնք սահմանված կարգով քննարկվել են և տրվել են պատշաճ լուծումներ:

Ընթացիկ ժամանակահատվածում համայնքապետարանում ստացվել են 408 գրություն, հղվել է 331 պաշտոնական գրություն, քաղաքացիներին տրվել է 1018 տեղեկանքներ:

Տրվել է համայնքի ղեկավարի 25 կարգադրություն և կայացվել է համայնքի ղեկավարի 32 որոշում:

2019թ. ընթացքում համայնքապետարանի աշխատակիցների փաստացի թվաքնակը կազմել է 14 մարդ, որից 7-ը համայնքային ծառայողներ, 5-ը սպասարկող և տեխնիկական աշխատողներ, «Կրթություն և Մշակույթ միացյալ տնօրինության » աշխատակիցների թվաքանակը 9 մարդ է:

2019թ ընթացքում աշխատավարձի պարտքեր չկան:

2019թ. ընթացքում համայնքի ավագանին գումարել է 12 նիստ, որտեղ քննարկվել են համայնքի խնդիրներին վերաբերվող տարբեր բնույթի հարցեր, և կայացվել են 70 որոշումներ:

## ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ ԳԼԽԱՎՈՐ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Միջհամայնքային ճանապարհների ասֆալտապատում՝ (Աղավնատուն-Հովտամեջ 6 կմ ):
2. Համայնքի փողոցների ասֆալտապատում:
3. Համայնքի Մշակույթի տան գազաֆիկացում, ջեռուցման համակարգի կառուցում:
4. Ոռոգման ցանցի ջրատարների վերակառուցում (կիսախողովակներ):
5. Վերամշակող գործարանի կառուցում:

Համայնքի ղեկավար Գ. Մաթևոսյան

ՀՀ Արմավիրի մարզի Աղավնատուն
համայնքի ղեկավար Գ. Մաթևոսյանի
2019թ. 2-րդ կիսամյակում կատարած աշխատանքների

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մասնակցությամբ՝ ՀՀ Արմավիրի մարզպետարանի Գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Արամ Հովհաննիսյանի, համայնքի ավագանու անդամների, համայնքապետարանի աշխատակազմի և <<Կրթություն և Մշակույթ>> միացյալ տնօրինության աշխատակիցների և համայնքի անդամների.

06-02-2020թ. ժամը 14:00

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն համայնքի ղեկավարը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նրանից բխող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերով, «Տեղական ինքնակառավարման մասին», «Իրավական ակտերի մասին», ՀՀ օրենքներով, համայնքապետարանի աշխատակազմի, ավագանու և համայնքապետարանի ենթակայության հիմնարկների աշխատակիցների միջոցով 2019թ. 2-րդ կիսամյակում իրականացրել է իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում՝ իր լիազորությունները:
Հիմնական նպատակը՝ համայնքի բնակչության կենսամակարդակի բարձրացումն է, որին հասնելու ճանապարհին սահմանվել են կարևորագույն սոցիալ-տնտեսական խնդիրներ, որոնք էլ անհրաժեշտություն է եղել լուծելու կիսամյակի ընթացքում: Այդ խնդիրների լուծման համար կարևորագույն պայման է հանդիսացել Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի և համայնքի ավագանու ամենօրյա հոգատար վերաբերմունքը և համայնքի խնդիրների լուծմանն աջակից լինելու պատրաստակամությունը, որի արդյունքում արձանագրվել է որոշակի հաջողություններ, որոնք ըստ բնագավառների ներկայացնում եմ Ձեզ:

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքապետը աջակցել է համայնքի բնակչության գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը, ինչպես նաև գյուղ. մթերքների իրացմանը:

Գյուղն ունի իր առանձնահատկությունները.
Հիմնականում զբաղվում են հողագործությամբ, այգեգործությամբ և պտղաբուծությամբ:
Ուշադրության կենտրոնում է պահվում աճեցրած բերքի իրացման, գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների դեմ պայքարի աշխատանքները, համայնքապետարանի ուժերով տարվա ընթացքում մշտապես կատարվել է մոլախոտերի դեմ պայքարի միջոցառումներ ծախսվել է 150.0 հազ. դրամ:
Պարբերաբար կատարվել է ներտնտեսային ոռոգման ցանցի մաքրման աշխատանքներ:
Անմիջական հսկողություն է իրականացվում անասնաբուժական ծառայության ոլորտում՝ ժամանակին կատարվում է բոլոր հակահամաճարակային միջոցառումները, կենդանիների հիվանդությունների կանխարգելման ուղությամբ: Կենդանիների շրջանում չի հայտնաբերվել հիվանդությունների համաճարակ:
Հետևողական և սիստեմատիկ հսկողություն է սահմանվում հանձնաժողովի կողմից առևտրի, հասարակական սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործող օբյեկտների գործունեության վրա: Ներկայումս համայնքում գործում է 16 առևտրի օբյեկտ:

## ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Ամենօրյա ուշադրության կենտրոնում է գտնվում և օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվում հողերի նպատակային օգտագործման, ինչպես նաև ընդերք օգտագործման գործունեություն իրականացնողների ուղությամբ:
Ամենօրյա աշխատանք է տարվում հողօգտագործողների հետ հողի հարկի, գույքահարկի գծով գոյացած ապառքների հավաքագրման ուղղությամբ: Կիսամյակում եկամուտների պլանը կատարվել է՝ հողի

հարկը – 45.6%-ով, գույքահարկը -89.5 %-ով, տեղական տուրքերը -36.6%-ով, ոչ հարկային եկամուտները – 47.2 %-ով, տեղական վճարները 25.5%-ով:

## ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Կառավարության սահմանած կարգով վերահսկողություն է իրականացվում համայնքի քաղաքաշինական գործունեության նկատմամբ:

Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվում է հողամասերի չափագրման և սահմանների ճշգրտման աշխատանքներ, տրվում են ճշտված իրավիճակային հատակագծեր:

Սիստեմատիկաբար կատարվում է խմելու ջրի ջրագծերի վթարների հայտնաբերման և վերացման աշխատանքներ:

Սահմանվում է հսկողություն խմելու ջրի որակի, ինչպես նաև վարակազերծման ուղղությամբ:

Սիստեմատիկաբար, շաբաթը 2 օր կատարվում է աղբահանություն, համայնքի բյուջեի սեփական միջոցների հաշվին, 2019թ. 2-րդ կիսամյակում կատարվել է ընդամենը 810.0 հազար դրամ ծախս:

Ծախսերը կրճատելու համար և սանիտարական մաքրության մակարդակը բարձր պահելու նպատակով ձեռք բերված մեկ ինքնաթափ բեռնատար ավտոմեքենան գործում է անխափան: Այն օգտագործվում է նաև համայնքի բնակչության կարիքները հոգալու համար:

Համայնքի կարիքների համար նաև փողոցները բարեկարգ պահելու և ծախսերի խնայողություն կատարելու նպատակով, ինչպես նաև բնակիչներին օժանդակելու համար ձեռք է բերվել մեկ Զիլ մակնիշի ինքնաթափ բեռնատար ավտոմեքենա, 3800.0 հազար դրամ արժեքով, որով կիսամյակի ընթացքում համայնքի փողոցները խճապատվել են այդ նպատակով ծախսելով 1050.0 հազար դրամ:

Կիսամյակում փողոցների ցերեկային լուսավորության ցանցի բարելավման նպատակով ձեռք է բերվել նոր սերնդի <<լեդ>> լուսատուներ 100 հատ, 1050.0 հազար դրամ գումարով, ինչպես նաև էլեկտրասյուների մեկուսիչներ , մալուխներ, անջատիչներ, էլեկտրական սյուների վրա ամրացվել է մետաղյա ամրակներ, լուսատուները տեղադրելու համար, ընդհանուր ծախսվել է 693.2 հազար դրամ գումար աշխատանքները դեռևս չի ավարտվել:

2019թ.-ի 2-րդ կիսամյակում համայնքի կողմից ներկայացված <<ասֆալտապատման աշխատանքներ>> սուբվենցիոն ծրագիրը հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից և կատարվել է 2-րդ կիսամյակում համայնքի Գ. Զոհրաբյան 1-ին և Գայի փողոցների 750 գծ.մ. ասֆալտապատման աշխատանքներ, 13960.0 հազար դրամ արժեքով,45%-ը 6282.0 հազար դրամ պետ բյուջեից և 55%-ը 7678.0 հազար դրամ համայնքի բյուջեից:

## ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ՍՊՈՐՏԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքում գործում է 1 միջանակարգ դպրոց:

Աշակերտների թիվը 316:

Աշխատողների թիվը՝ 42-ը, որից՝ ուսուցիչներ և վարչական աշխատողներ՝ 31:

Համայնքապետարանի ուշադրության կենտրոնում է դպրոցը:

Կրթության որակը գտնվում է բարձր մակարդակի վրա:

Նախադպրոցական խմբի գործունեության կազմակերպման համար համայնքի բյուջեից 2-րդ կիսամյակում դրամաշնորհ է հատկացվել 1430.0 հազ. դրամ:

Համայնքապետարանի նախաձեռնությամբ 2019թ. 2-րդ կիսամյակում կազմակերպվել է տարբեր միջոցառումներ: Ծախսվել է 600.0 հազար դրամ գումար:

Մշակույթի տանը տեղավորված է նաև գրադարանը, որը վերանորոգված և կահավորված է, ունի 11145 կտոր գրականություն: Գրադարանը մշակույթի հետ համատեղ կազմակերպել է տարբեր բնույթի միջոցառումներ, գրական ցերեկույթներ:

Մեծ ուշադրություն է դարձվում թոշակառուներին և երիտասարդության հետ տարվող աշխատանքներին՝ նրանց հանգիստը պատշաճ կազմակերպելու նպատակով Մշակույթի տանը գործում է , հանգստի խաղասենյակ, որտեղ ձմռան ամիսներին կազմակերպվում են շախմատի, նարդու, սեղանի, խաղերի մրցումներ:

Համայնքում կազմակերպվել է տարբեր միջոցառումներ, մշտապես ծաղկեպսակներ է դրվել << Բոլոր ժամանակներում զոհված Աղավնատունցիների >> հուշարձան համայիրին, ծախսվել է 300,0 հազ դրամ:
Ուշադրության կենտրոնում է գտնվում սպորտի զարգացումը:
Համայնքապետի ամենօրյա ուշադրության կենտրոնում է նաև առողջապահության ոլորտը:
Աջակցություն է ցուցաբերվում համայնքի սանիտարահիգենիկ վիճակի բարելավմանը, հակահամաճարակային միջոցառումների իրականացմանը:
Համայնքի բնակչության բուժ. սպասարկումը գտնվում է բարձր մակարդակի վրա:
Համայնքում գործում է «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողով, որի հիմնական խնդիրը անգործունակ կամ սահմանափակ գործունակ քաղաքացիների, անչափահասների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումն է, ընտանիքում ապրելու և դաստիարակվելու երեխայի իրավունքի ապահովումը:
Ուշադրության կենտրոնում է գտնվում զոհված ազատամարտիկների և սոցիալապես անապահովների ընտանիքները, որոնց մշտապես ցուցաբերվում է դրամական օգնություն: 2019թ. 2-րդ կիսամյակում համայնքի շուրջ 80 սոցիալապես անապահով ընտանիքների, նորածին երեխաների մայրերի և մահացածների ընտանիքների տրվել է դրամական օգնություն 2055.0հազ. ՀՀ դրամ:
Համայնքում հաշվառված են ընդամենը՝ 370 թոշակառուներ, այդ թվում 245 ծերության և աշխատանքային , 2-ը՝ կերակրողը կորցնողի, 123-ը ՝ հաշմանդամության: Նպաստառու ընտանիքների թիվը կազմում է 86 :
Թոշակները և նպաստները տրվում են ժամանակին:

Համայնքում 100% հասանելիություն ունի և գործում է բջջային ՄՏՍ-Հայաստան, Յուրոմ և <<Վեոն Արմենիա>> օպերատորները:
Համայնքում բարձր է պատասխանատվությունը զորակոչի նկատմամբ: Զորակոչից խուսափողներ չկան, 2019թ. 2-րդ կիսամյակում զորակոչվել է ինը զորակոչիկ:
2019 թվականի 2-րդ կիսամյակում համայնքում կատարվել է զգալի աշխատանքներ՝ մասնավորապես.
<<Մաքուր Հայաստան>> ծրագրի շրջանակներում մշտապես կատարվել է համայնքի աղբավայրի մաքրման հողալցման աշխատանքներ: Մաքրվել է համայնքի դպրոցի, բուժ. ամբուլատորիայի, համայնքապետարանի, մշակույթի տան ինչպես նաև պատմամշակութային հուշարձանների տարածքները և շրջակայքը:
Կատարվել է համայնքի դաշտամիջյան ճանապարհների փոսալցումներ և հարթեցումներ, որի վրա ծախսվել է 3960.2 հազար դրամ: Ձեռք է բերվել մետաղյա խողովակներ, դաշտամիջյան ճանապարհների և համայնքի փողոցների խաչմերուկներով անցնող առուներում տեղադրելու համար 208.2 հազար դրամ արժեքով:
Համայնքի տնտեսությունների թիվը ՝ 896, բնակչության թիվը 3399 մարդ, գյուղատնտեսության մեջ զբաղվում են՝ 1510 մարդ:
2019թվակպնի 2-րդ կիսամյակի ընթացքում համայնքում ծնվել է 17 երեխա:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2019թ. 2-րդ կիսամյակում հավաքագրվել է եկամուտներ՝

հազար դրամ

| N | անվանումը | պլան տարեկան | 2019թ. 2-րդ կիսամյակ | | կատարողական % |
|---|---|---|---|---|---|
| | | | պլան | փաստացի | |
| 1 | հողի հարկ | 9500.0 | 4750.0 | 4329.2 | 91.1 |
| 2 | գույքահարկ | 10000.0 | 5000.0 | 8936.5 | 178.7 |
| 3 | տեղական տուրքեր | 440.0 | 220.0 | 161.3 | 73.3 |
| 4 | տեղական վճար | 1350.0 | 675.0 | 343.8 | 50.9 |
| 5 | ոչ հարկային եկամուտներ | 2400.0 | 1200.0 | 1227.8 | 102.3 |
| 6 | պետ. բյուջեից տրամադրվող դոտացիա | 61532.4 | 30766.2 | 30766.2 | 50.0 |
| 7 | հողի օտարումից մուտքեր | - | - | 610.0 | - |
| 8 | Պետ բյուջեից սուբվենցիա. | 6282.0 | 6282.0 | 6282.0 | 100.0 |
| 9 | այլ ոչ հարկ. եկամուտներ | - | - | 199.2 | - |
| 10 | ընդամենը վարչական բյուջե | 91504.4 | 48893.2 | 52856.0 | |
| 11 | տարեսկզբի ազատ մնացորդ | 17347.4 | 17347.4 | 17706.5 | 108.1 |
| | Ընդամենը | 108851.8 | 66240.6 | 70562.5 | 106.5 |

2019թ. 2-րդ կիսամյակում կատարվել է ծախսեր հետևյալ ուղղություններով՝

հազար դրամ

| N | ծախսերի անվանումը | պլան տարեկան | 2019թ. 2-րդ կիսամյակ | | կատարողական % |
|---|---|---|---|---|---|
| | | | պլան | փաստացի | |
| 1 | տեղական ինքնակառավարում | 38915.0 | 19203.8 | 22662.5 | 118.0 |
| 2 | Համայնք. այլ ծառ. | 12800.0 | 7800.0 | 7527.3 | 96.5 |
| 3 | պաշտպանություն | 1200.0 | 600.0 | 809.5 | 134.9 |
| 4 | մշակույթ և ռադ. հեռ. հաղ. | 15100.0 | 7600.0 | 8464.0 | 111.4 |
| 5 | կրթություն | 3430.0 | 1430.0 | 1430.0 | 100.0 |
| 6 | Արտաքին լուսավորում | 3400.0 | 1700.0 | 1748.5 | 102.9 |
| 7 | Սոց. օգնություն | 3875.0 | 1875.0 | 1875.0 | 100.0 |
| 8 | Գյուղատնտեսություն | 1000.0 | 500.0 | 429.3 | 85.9 |
| 9 | Ճանապարհների վերանորոգում | 5200.0 | 1900.0 | 2495.8 | 131.4 |
| 10 | Քաղաքացիակ. պաշտպանություն | 300.0 | 300.0 | 0 | 0 |
| 11 | պահուստային ֆոնդ | 2.4 | 2.4 | 0 | - |
| 12 | ֆոնդային բյուջե | 23629.4 | 23629.4 | 19885.8 | 84.2 |
| | Ընդամենը | 108851.8 | 66540.6 | 67327.2 | 101.2 |

«Քաղաքացիների առաջարկությունների, դիմումների և բողոքների քննարկման կարգի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի պահանջի համաձայն, Աղավնատան համայնքապետարանում 2-րդ կիսամյակում ստացվել է 73 դիմում:

Դիմումներում բարձրացվել են սոցիալական, ֆինանսական, հողային, շինարարության և այլ բնույթի հարցեր, որոնք սահմանված կարգով քննարկվել են և տրվել են պատշաճ լուծումներ:

Ընթացիկ ժամանակահատվածում համայնքապետարանում ստացվել են 200 գրություն, հղվել է 171 պաշտոնական գրություն, քաղաքացիներին տրվել է 452 տեղեկանքներ:

Տրվել է համայնքի ղեկավարի 14 կարգադրություն և կայացվել է համայնքի ղեկավարի 10 որոշում:

2019թ. 2-րդ կիսամյակի ընթացքում համայնքապետարանի աշխատակիցների փաստացի թվաքնակը կազմել է 14 մարդ, որից 7-ը համայնքային ծառայողներ, 5-ը սպասարկող և տեխնիկական աշխատողներ, «Կրթություն և Մշակույթ միացյալ տնօրինության » աշխատակիցների թվաքանակը 9 մարդ է:

2019թ. 2-րդ կիսամյակի դրությամբ աշխատավարձի պարտքեր չկան:

2019թ. 2-րդ կիսամյակի ընթացքում համայնքի ավագանին գումարել է 7 նիստ, որտեղ քննարկվել են համայնքի խնդիրներին վերաբերվող տարբեր բնույթի հարցեր, և կայացվել են 36 որոշումներ:

## ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ ԳԼԽԱՎՈՐ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Միջհամայնքային ճանապարհների ասֆալտապատում՝ (Աղավնատուն-Հովտամեջ 6 կմ ):
2. Համայնքի փողոցների ասֆալտապատում:
3. Համայնքի Մշակույթի տան գազաֆիկացում, ջեռուցման համակարգի կառուցում:
4. Ոռոգման ցանցի ջրատարների վերակառուցում (կիսախողովակներ):
5. Վերամշակող գործարանի կառուցում:

Համայնքի ղեկավար Գ. Մաթևոսյան